# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 107-Ա**
**25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թ.**

**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 26/14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.0269 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի թիվ 723-Ն, 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286, Կապան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 23-ի թիվ 9-Ն որոշումների և հաշվի առնելով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Կապան համայնքի վարչական տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող, համայնքի Կապան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 26/14 հասցեում գտնվող, բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողերից 0.0269 հա հողամասը /ծածկագիր 09-001-0513-0038/ հասարակական կառուցապատման նպատակով (խանութ կառուցելու) աճուրդով վաճառել՝ մեկնարկային գին սահմանելով 435780,0 /չորս հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր ութսուն/ դրամ:

2. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ ( 10 )՝**

ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ — ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ — ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ — ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ

ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ — ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ

ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ — ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — ՆԱՐԵԿ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

*2018 թ սեպտեմբերի 26*

*ք. Կապան*